Հաստատում եմ

«Մեհրաբյանի անվան բժշկական

քոլեջ» ՍՊԸ տնօրեն

_____Է. Մեհրաբյան

«02» 02 20 24թ.

ԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի ուսանողների գնահատման գործընթացի վերահսկողության

1. Միջին մասնագիտական կրթության բոլոր որակումների և կրթական ծրագրերի համար ՝՝Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ՝՝ ՍՊԸ սահմանել է հստակ ձևակերպված կրթական ելքային արդյունքներ՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով, որոնք ակնկալում են ուսանողից առանձին դասընթացը, ուսումնական մոդուլը և ամբողջ կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո:

1.1. Քոլեջը սույն կարգով սահմանում է, որ ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքները նրանց ուսումնառության որակի համարժեք արտացոլումն է:

1.2. Գնահատման գործընթացի անաչառությունն ապահովելու նպատակով քննությունը (ստուգարքը) համարվում է քոլեջում կայացած և արդյունքներն ընդունելի, եթե այն անց է կացվել ուսումնական մասի կողմից կազմված քննությունների, ստուգարքների կազմակերպման օրացույցային պլանին համապատասխան:

1.3. Ավարտական գնահատումներն անց են կացվում արտաքին գնահատողների մասնակցությամբ կազմված քննական հանձնաժողովների կողմից:

1.4. Ուսումնառության գիտելիքի գնահատման վերջնարդյունքը կատարվում է յուրաքանչյուր կիսամյակի վերջում՝ քննության կամ ստուգարքի հանձման ձևով՝ ըստ նախօրոք, ՄՈՒՀ-ի կողմից հաստատված, ուսումնական պլանի :

1.5. Ցիկլային պարապմունքների ձևով դասընթացների կազմակերպման դեպքում, եզրափակիչ քննությունը կամ ստուգարքը կազմակերպվում է տվյալ դասընթացի ցիկլի վերջում:

2. Կիսամյակը մեկ անգամ քոլեջի կողմից իրականացվում են վարչական ստուգումներ՝

ա/ եզրափակիչ քննությունների գնահատման,

բ/ գնահատման արդյունքների պատշաճ փաստաթղթավորման:

3. Ավարտական ամփոփիչ ատեստավորման գնահատման արդյունքների հիման վրա, ուսումնական մասի կողմից, կազմվում են արձանագրություններ՝ ուսանողների ձեռք բերած կրթական նախանշված արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ, որոնք հետագայում հիմք են հանդիսանում արդարացի մրցակցության իրականացման և գնահատման գործընթացի հետագա զարգացման համար:

4. Լուծարքային շրջանի կանոնակարգը սահմանվում է Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների համար: Կանոնակարգը հստակեցնում է քննությունների վերահանձնման հիմքերը, գնահատականների վերահանձնման կարգը և արդյունքները (հիմք՝ վերը նշված ենթակետերը):

5. Անբավարար արդյունքների՝ մեկ կամ մեկից ավել անբավարար գնահատական ունեցող ուսանողներն, ուսումնական ծրագրի մի քանի ակադեմիական առարկաներ, (մոդուլներ) կամ հիմնավոր պատճառների բացակայության դեպքում միջանկյալ գնահատականները չհանձնելով, ճանաչվում են որպես ակադեմիական պարտք, մարումն իրականացվում է վճարովի հիմունքներով:

Համաձայն տնօրենների խորհրդի նիստի 29.12.2023թ. որոշմամբ վճարման չափը սահմանվել է 3000 (երեք հազար) դրամ:

"Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ" ՍՊԸ ուս. մասի վարիչ՝ /Հ.Ա. Բաբայան/